

ԳՐԻԳՈՐ ԱՌԵԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՇՈՆ

7-րդ դարի շարականագիր է Բարսեղ Շոնը, որը Ծիրակ գավառի Դպրեվանքի վաճառային էր: Վարդան պատմիշը Բաղրդում է, որ նա ոչ միայն գրել է «Յարթեան Հարցեր» շարականները, այլև Ներսէս Գ Ծինող (641—661) կաթողիկոսի հանձնարարությամբ խմբագրել, կանոնափորել է Ծարավնոցը. «..ապա հրամայեաց ընտրել զարծանն և զայն միայն ուսանել, որ և արարին ի ձեռն սրոյն Բարսիկ՝ մականոն Ծոն կոչեցելոց, որ էր առաջնորդ սուրբ ուխտին, որ դպրեվանք կոչի ի գաւառին Անոյ... վասն որոյ ճոնընտիր կոչի շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցին մեր»¹:

Խակ Կիրակոս Գանձակեցին բացատրում է, թե ինչ պատճառով կաթողիկոսը Բարմայել է Բարսեղին՝ խմբագրելու Ծարակնոցը: 7-րդ դարում արդեն այնքան էին բազմացել ու յեկեղեցիներում տարածվել շարականները, որ մի գավառում ժամասացության ժամանակ երգվածները մյուս գավառների համար անծանոթ էին: Ժամերգության այդպիսի մի դեպքի, Բագավանի եկեղեցում, Վարդավառի տոնին, ներկա է լինում Ներսէս Ծինող կաթողիկոսը, երբ աշակողմյան դասի սկսած Հարցը չի կարողանում շարունակել ձախակողմյան դասը և այդպիսով մի քանի Հարց իրար էն խառնում և շփոթում: Ահա թե այդ դեպքի մասին Կ. Գանձակեցին ինչ է գրում. «Դեպ եղի սմա (խոսքը Ներսէս Ծինող կաթողիկոսի մասին է—Գ. Հ.) աշխարհածողով բազմութեամբ ի տօնի վարդավառին լինել

ի Բագուան: Եր բազմացեալ էին երգը շարականց յեկեղեցին Հայոց մինչև ոչ գիտել միոյ գավառի երգեցող՝ զմիւտոն: Եր ասացին շարական վարդավառի հարցինն և միս դասն ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարական, և ոչ զայն ևս գիտէին: Ապա հայրապետն Ներսէս, Բաւանութեամբ ամենամայ ժողովոյն ընտրեցին զափանան և զօգտակարն, զի յամենայն յեկեղեցին յամենայն ատոր մի պաշտօն լիցի ըստ ասուրն խորհրդոյ: Եր ընտրեցին արս իմաստուն, զի շրջնացին ընդ ամենայն աշխարհն հայոց և զնոյն կարգաւորութիւն հաստատեցն, որ է մինչև ցայսօր»²:

Սակայն մեր շարականագիտության մեջ ոչ միայն խոսք չի եղել Բարսեղ Շոնի մասին որպես շարականագիր, այլն չի ընդունվել, որ նա Ներսէս կաթողիկոսի հանձնարարությամբ խմբագրել է մեր Ծարակնոցը և Ծոնընտիր կոչված Ծարակնոց չի եղել և դա պատմագիրներ Վարդավանի և Կ. Գանձակեցու կողմից հաղորդած թյուրիմացության արդյունք է: «Վարդավանի ու Կիրակոսի այս պատմությունը,—գրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,—մի վկայություն է միայն նրա համար, որ մեր հոգևոր բանաստեղծության ծաղկելուն նապատել է առանձնապես այն, որ դարեր շարունակ մեր յեկեղեցիներում միատեսակ ժամերգություն և կանոնական պարտադիր երգեր չեն եղել, և թե փորձեր են եղել շարականների մեջ ընտրություն անելու ու միատեսակության

¹ Մեծին Վարդավան Բարձրաբերդցոյ, պատմութիւն տիեզերական, Մոսկվա 1861, էջ 96:

² Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատան. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1981 թ., էջ 61—68:


վերածելու ժամերգությունն այդ նկատմամբ: Որ Վարդանի ու Կիրակոսի ժամանակ այդ միատևակությունն արդեն հաստատված է եղել, այդ պարզ է, քայլ որ «Ծոնենիթ» շարականը՝ 7-րդ դարում կազմված լինի, այդ կարելի չէ ընդունել»³: Խոկ թե ինչու պրոֆ. Մ. Աքելյանը վերոիթիցալ երկու պատմագիրների բոլոր հաղորդածները շարականների մասին ընդունում, հավաստի է համարում, քայլ «Ծոնենիթ» շարականի խմբագրումն ու գոյությունը չի ընդունում, բացատրում է այսպես՝ «Հավանական է կարծել, որ Կիրակոսն ու Վարդանը, որոնց երկուի աղբյուրն անպայման մեկ է, մի պատմական շփոթություն են բովանդակում. դեռք երկի 12-րդ դարից Ներսես Շնորհականությունը և իր ժամանակակից «ամենագործելի» և «աստուածաշնորհ» Բարսեղ Վարդականից (1162 թ.) փոխված է 7-րդ դարը Ներսես Շինողի ժամանակ»⁴: Նախ պետք է ասել, որ պատմիչ Վարդանի և Գանձակեցու հաղորդածները, ինչպես տևանք, բավականին տարբեր են, հետևապես, դրանք եթե աղբյուր ունեցել են, համեմատնեաս, նոյնը չի եղել: Վարդանը գլխավոր ուշադրությունը դարձնում է կաթողիկոսի հրամանի վրա, որ հանձնարարվում է Բարսեղ Շնոհը՝ ընտրություն կատարել և նոր Շարականոց կազմել, որ ընդհանուր լինի բոլոր եկեղեցների համար: Խոչ կ. Գանձակեցին տալիս է Շարականոցը խմբագրելու պատճառները, Բագավանում տեղի ունեցած դեպքը, որոշակի ժամանակը (Վարդավառի տոնի օրը) և այլն: Վարդանն ասում է, որ միայն կաթողիկոսն է հանձնարարել Շնոհ խմբագրելու Շարականոցը, ինչ Գանձակեցին հաղորդում է, ծողովն է որոշել, որ Բարսեղ Շնոհ ընտրություն կատարի Շարականոցում:

Որեմն Վարդանի և Կիրակոսի հաղորդածները նոյնը չեն և նոյն աղբյուրը չեն ունեցել: Այնուեւուն, ինկապես, պատմիչները արդյոք չեն շփոթել Ներսես Շինողին ու Ներսես Շնորհալուն և Բարսեղ Շնոհն ու 12-րդ դարի Բարսեղ Անեցուն: Թվում է, թե այստեղ էլ ոչ մի շփոթություն չկա՞ ո՞չ ժամանակի, ո՞չ տեղի և ո՞չ էլ անձնավորությունների: 7-րդ և 12-րդ դարերի միջև ընկած է հինգ հարյուր տարի: Վարդանի և Գանձակեցու հման պատմիչները չեն կարող իրարից աղբյուր ունեցել 7-րդ դարից իրարից աղբյուր ունեցել 7-րդ դարից իրարից աղբյուր ունեցել 7-րդ դարում, երբ դեռ մեծ տոներից մի քանիք չունեին իրենց կանոնն ու մըշտական շարականը, երբ դեռ կանոնը չեր ընդունված հայոց եկեղեցուն, ամեն մի շարական կարող էր մոտք գործել եկեղեցի և երգվել: Անչափ բազմացել էին շարականները և միանգամայն հնարավոր էր, որ ժամերգության ժամանակ մի շարականը շփոթեին մուսի հետ: Հետո, Բարսեղ Անեցի կաթողիկոսը չեր կարող խմբագրել շարականը, որովհետև նա շարականագիր չեր, քանի որ մինչ այդ Շարականոցի, ժամագրքի և եկեղեցական մուս նշանավոր

³ Մ. Աքելյան, Հայոց հիմ գրակ. պատմություն, Երևան, 1944 թ., հո. Ա, էջ 477—478;

⁴ Անդ, էջ 478:

անշուշտ նրանցից մեկն ու մեկը կողղեր, քայլ այդպիսի բան չի եղել: Խոկ ինչ վերաբերում է տեղին, պարզ ասված է՝ «Բագավանում», որը գտնվում է Բագրեսանդում, (այժման Ուչքիլիսեն), և Ներսես Շնորհալին չեր կարող Կիլիկիայից գալ Բագավանը՝ Վարդավառի ժամերգությունը լսելու: Կիլիկիայում Բագավան անունով վայր չկա, ինչ Ներսես Շնորհալին իր 7 տարվա կաթողիկոսության ժամանակամիջոցում երբեք Հոռմկալայից դուրս չեկավ, որովհետև նա Մշտապես տառապում էր հոդացավով և չերմախոտով, քացի այդ, եթե ուզենար էլ, չեր կարող Սլաշկերտ գնալ, քանի որ այդ գավառը Կիլիկիայի հայկական իշխանության ասիմանեներից դուրս էր և հեռու: Վերջապես Վարդան պատմիչը և Կ. Գանձակեցին չեն կարող շփոթել թեկուզ նոյն անունը ունեցող երկու մեծ, նշանավոր կաթողիկոսներին: Այդ երկու կաթողիկոսները էլ իրենց գործունեությամբ, ժամանակով, կենագրությամբ հայտնի են մեր պատմության մեջ և չեր կարող նման շփոթություն լինել: Հետո, Ներսես Շնորհալուց 4 դար առաջ Սուտիանու Սյունեցին արդեն մեր ժամանակարգությունը կանոնավորել էր, ամեն մի տոն ուներ իր հավոր պատշաճի կանոնը, չեր կարող պատահել, որ Վարդավառի հման մեծ տերության տոնը, այս էլ 12-րդ դարում, Ն. Շնորհալու օրոք, չունենար իր կանոնը, և Հարցը երգեկիս եկեղեցու երկու դասերը «շփոթեին բազմաթիվ շարականներ» և չկարողանային գրությել տոնի օրվա շարականը: Վարդավառի տոնը 12-րդ դարում տոնվում էր ոչ միայն մի օր, այլ մյուս տերության տոների նըման բազմօրյա էր և ասեն մի օրն ուներ իր կայուն կանոնն ու շարականը: Շնորհալու օրով բոլոր տոներն իրենց շարականներով արդեն վաղուց կանոնավորված էին և ժամերգության ժամանակ, այս էլ Բագավանի նման մի նշանավոր եկեղեցուն, այդպիսի շփոթություն 12-րդ դարում անկարել էր: Այդ դեպքը ինկապես, ինչպես պատմիչներն են հաղորդում, տեղի և ունեցել 7-րդ դարում, երբ դեռ մեծ տոներից մի քանիք չունեին իրենց կանոնն ու մըշտական շարականը, երբ դեռ կանոնը չեր ընդունված հայոց եկեղեցուն, ամեն մի շարական կարող էր մոտք գործել եկեղեցի և երգվել: Անչափ բազմացել էին շարականները և միանգամայն հնարավոր էր, որ ժամերգության ժամանակ մի շարականը շփոթեին մուսի հետ: Հետո, Բարսեղ Անեցի կաթողիկոսը չեր կարող խմբագրել շարականը, որովհետև նա շարականագիր չեր, քանի որ մինչ այդ Շարականոցի, ժամագրքի և եկեղեցական մուս նշանավոր



գրքերի խմբագրողներն ու կազմողները ոչ սիայն լավ շարականագտն են եղել, այլև շարականագիր կաթողիկոսներ: Այդպիսի խմբագրողներ են եղել Հովհան Մանդակունին, Հովհան Օճենցին, Ներսես Շնորհային: Պատմագրողներ Վարդանն ու Կիրակոս շատ որդշակի ասում են, որ շարականներն անշահ քաջանցել են լուերորդ և ոչ թե տասներկուերորդ դարում Մեծ Հայքում և ոչ թե Կիլիկիայում, ժամերգության ժամանակ շարականների շփոթումը եղել է ոչ թե Կիլիկիայում, այլ Մեծ Հայքի Բագրևանդ գավառի Բագավանի եկեղեցուն, Վարդականի տոնին օրը՝ շարականներից Հարցը երգելիս, որ եկեղեցու աշակողմյան և ձախակողմյան դասերը ինչքան էլ շարշարվեցին, չկարողացան գտնել Վարդականի Հարցը, որ այդ խառնաշփոթության պատճենով Ներսես Շինոյ կաթողիկոսը, որն անձամբ ժամերգությանը մերկա էր, շատ վրովվեց, հրամայեց դարեւկանքի վաճառիրը՝ Բարսեղ Շոնի՛ խմբագրելու Շարականցը և այլն: Այսքան որոշակի, համոզիշտ տվյալները և հաղորդումները հաստատում են, որ իրոք շարականների բազմացումն ու տարածումը, դրանց խմբագրումը տեղի է ունեցել Մեծ Հայքում ոչ թե 12-րդ, այլ 7-րդ դարում, ոչ թե Ներսես Շնորհայու, այլ Ներսես Շինոյի օրով, ոչ թե Բարսեղ Անեցու, այլ Բարսեղ Շոնի ձեռքով: Այնպես որ, այստեղ ոչ մի թյուրիմացություն չկա և պետք է հավատալ այդ երկու պատմագրողների հաղորդաներին, որ իրոք, 7-րդ դարում անհրաժեշտ է եղել ընտրություն կատարել շարականների մեջ, ժամերգությունը կանոնավորելու և կայունացնելու համար, և այդ գործը կատարել է Շիրակի դարեւկանքի վաճառիայր Բարսեղ Շոն վարդապետը:

Բարսեղ Շոնը Շարականցի պատահական խմբագիր չի եղել: Նա միաժամանակ շարականագիր է: Թեև մեր շարականագիրության մեջ նա չի ճանաչված որպես շարականների հեղինակ և երաժշտագետ, սակայն, իսկապես նա շարականներ էլ է գրել և հմուտ է եղել հայ եկեղեցու ժամերգության գործում:

«Զկարգ շարականոց Յարութեան ըստ ութ ձայնից՝ Բազումք ընծայեն Մովսեսի Խորենացոյ, և այլք Բարսեղ Շոն կրչեցելոյ՝ ի մեջն եօթներորդ դարում, որպէս իշխէ Վարդան Վարդապետ ի տեսութիւն Անթառամ ծաղկին ասելով ի սկզբանն: «Զի թէ թարժանիշն և հոգեշարժ վարդապետն Մովսէս Խորենացին ասցեալ է զԾննդեան և զՅարութեան երգս շարականոց և թէ մեծն և հանդիսանար ճանաւորն Բարսեղ՝ մական-

ուամբ ճոն կրչեցեալ ապա չէ պարտ պակաս հայել ի խորհրդաւոր բանքն յայս և արդարն ի կազմութիւն շարականոց երևի վայելուց հետութիւն հանդերձ ճարտարութեամբ ի զանազան ձևն բանից փոփոխելով զնոյն զվանութիւն ունոյ, և զգերազանց ասացուածն՝ որք առաւել ի ձայնս թէ, գձ, գկ, ղձ, ղկ»⁵: Նախորդ հոդվածներում Մովսես Խորենացուն վերագրվող շարականները փաստորն և բանասիրորն վերլուծելիս, եկանք այն եղակացության, որ Յարութեան Հարցերը նրա գրչին չեն պատկանում: Ինչպես պատմիչը, այնպես էլ շարականների մեծ գիտակ, բազմավաստակ հ. Գ. Ավետիքյանը հրավագիրուն Բարսեղ Ծոնին է վերագրում Յարութեան վերոհիշյալ հինգ Հարցերը: Այդ շարականների ոճը, լեզուն, գործածված պատկերները և խորի գեղարվեստական մյուս միջոցները և իրենց հերթին հաստատում են, որ դրանք ոչ թե հինգերորդ, այլ յոթերորդ դարի գործ են և պատկանում են Բարսեղ Ծոնի գրչին: Որո՞նք են այդ շարականները և ի՞նչ արժեք են եղրկայացնում դրանք: Հարցության վերոհիշյալ 5 ձայներուկ Բարսեղ Ծոնը գրել է 24 Հարց, որից թէ՝ 5, զձ՝ 5, գկ՝ 3, ղձ՝ 5 և ղկ՝ 6: Բոլոր Հարցերը ունեն իրենց Գործառունը և կրում են փառաբանական բնույթը: Ինչպես Շարականցում եղած բոլոր Հարցերը, այնպես էլ սրանց կակետը և ատաղձը Բարելոնի երեք մանկությն են՝ տարբեր առումներով և տարբեր փառաբանություններով: Ավագանու ունեցող 4—5 Հարցերում փառաբանվում է Փրկիչը: Երկնային զորքերն ու բնակիչներն անգամ երկրությամբ փառաբանում են Արարծին, որը թողած իր հավիտենական, անձառ փառքը, խոնարհվել, իշել է երկիր՝ կամավոր խաչվելու, անարգվելու հրեաների կողմից, որպեսի իր մահվամբ նոր կանք տա մարդկությանը, որը դատապարտված է եղել Աղամի ժամանակներից: Այդ Հարցերի մեջ շարականագիրը փառաբանության հետ միաժամանակ դիմում է Փրկիչն, խոսում նրա հետ և իր երգին տպիս աշխույժ, կենդամի բնույթը: Դիմում է նաև Արարծին, որ մեղապարտ նարդկությունն ազատելու համար նա իր Որդուն ուղարկել է երկիր, մարմնացել է հավիտենական Բանք սուրբ կույսի արգանդում և որպես մարդ, ապրել է մարդկանց մեջ շուրջ երեսուն տարի՝ կամավոր խաչվելու, մահանալու, դժոխքն ու խալարը բանդելու և երեք օրից հետո հարություն

⁵ Հ. Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականց, Վենետիկ, 1814 թ., էջ 284—285;

առնելու համար: Եվ այդ ամենը կատարվել է «Հօր հաճութեամբ»: Փրկիշը ոչ միայն մարդացել է, այլև ծառայի դեռ է կատարել մարդկության համար և այդ համեստությամբ, մարդասիրությամբ և անձնուրացությամբ նա հասել է իր նպատակին, այն է՝ «կանգնեցեր զամհացեալսն»: Երրորդ ձայնին (գձ) պատկանող հինգ Հարցերը հետապնդում են նույն նպատակները՝ տարբեր կողմերից, տարբեր եղանակներով: Այս Հարցերում փառարանականի կողքին բազմաթիվ են նաև խոսքի գեղարվեստական ձևերը:

Փրկի կյանքը համարվում է «անապական արյուն»: Պրով նա ցողել է տիեզերը, մաքրել կեղսից ու խավարից, որոնցով ապականված է եղել տակավին Սոյամի ժամանակներից: Նա, որ ստեղծել է աշխարհն ու արևը, բոլոր արարածները, այժմ իր ստեղծածների ձեռքով բարձրացել է խաչակիայտի վրա: Տիեզերը անգամ ցնցվել է Փրկի չարչարանքներից և արևը խավարել.

«ԵՇ տեսեալ արեգականն
ԶԱրարիշտ ի վերայ խաչին,
Զհանդուրժեալ չարչարանաց Արարչին,
Խաւարեցցոյց զլոյսն ի միջօրէի
Ի յամէ փառաց քոց
Տէր Աստուած, Հարցն մերոց»⁶:

Նա, ով կենարար էր, կյանք էր բաշխում աշխարհին, այսօր հրեա զինվորը տեսով ծակում է նրա կողը, որտեղից

«Աղրիր կենարար բոյսեալ
Լուաց զտիեզերս ի մեղաց...»

Աշխարհին անմահություն տվողն այժմ ինքն է կամավոր հրաժարվում իր կյանքից և ընդունում մահը: Թենու ինքը, ըստ շարականի, ամենազոր է, «Էակից Հօրը» և «Ոի է բարութեամբ» և մեռելներին կյանք է պարզել, սակայն հիմա, անօրենների ձեռքով, անարգում, խոցվում, ծարավում ու տանջվում է խաչակիայտի վրա՝ նույն անօրենների և աշխարհի փրկության համար: Եթե առաջ ինքն էր հսկում ու կառավարում երկնի զորքերին, «Վեցթևան» սերովեներին և «բազմաշեայ» քերովեներին, այսօր նրա մարմնին հսկում է գերեզմանատան պահակը.

«Կենարիդ յախտենից Քրիստոս,
Այսօր ի գերեզմանի եղար.

Եւ պահապանքն պահէին զգուշութեամբ Զգերեզման քո, Տէր Աստուած Հարցն մերոց»⁷:

Վառ ձայնի (գկ) Հարցերում շոշափվում է Քրիստոսի մարդեղության խորհուրդը: Անձառելի Բանը մարմնն է առել կուսից աղամորդուն փրկելու համար: Այստեղ շարսկանագիրը Փրկին այլաբանորեն համարում է «գառն անարատ», որը «զենաւ մեզ պատարագ... ի վերայ խաչին», որով և նա կարողացավ քանդել դժոխքը, և բանալ դրամսի դռները մարդկության համար: Փրկին իր հարությամբ անենքից ու դատապարտումից ազատագրեց մարդուն և հնարավորություն տվեց նրան.

«Ի կոչումն արքայական սեղանույն տէրունեան,
Սարմնոյ և արեան Աստուծոյ հարցն
մերոց»⁸:

Չորրորդ (գձ) ձայնի Հարցերը շարունակում են նույն մոտիվները և նույն փառանությունները, որոնք տեղ-տեղ ոչ միայն նույն մոտքերն ու զգացմունքներն են դրսորում, այլև մի քանի տեղ կրկնվում են՝ թեև տարբեր ձևակերպություն ու եղանակներով:

Վերջ ձայնով Բարսեղ Շոնը դրել է վեց Հարց՝ իրենց Գործատներով՝ «Որ զամենազօր», «Այսօր ցնծան երկինք», «Փառատրեալ է անոն քոյ», «Որ յառաջ քան զարև», «Անսկիզբն Բանը» և «Որ ահեղակերպ աթոռ հստիս»:

«Որ զամենազօր» Հարցի սկզբում հիշվում են հնոցում եղած Բարեկոնի երեք մանկունքը, որտեղ երևացել է Տիրոջ զորությունը: Ապա երգվում է Փրկի «Բազմազեղ ներդութիւնը» առ «օրաց երկնաւորաց», «բազմագութ» ողորմությունը առ մարդկային ցեղը, որի համար նա խաչ բարձրացավ: Գործատունը խորացնում է Հարցի մոտքերն ու փառարանությունը: «Այսօր ցնծան» Հարցի մեջ ցնծության մոտիվներ են հնչում: Երկինքն ու երկիրն ուրախության մեջ են, որովհետև.

«Այսօր նորոգեցան տիեզերք ամենայն,
Յարութեամբ քո Տէր Աստուած հարցն
մերոց»⁹:

Երրորդ Հարցն ամբողջովին ներբող ու

⁷ Անդ, էջ 448:

⁸ Անդ, էջ 456:

⁹ Անդ, էջ 491:

փառաբանություն է՝ նպիրված Փրկչին և Սատծուն.

«Փառատրեալ է անոն քո սուրբ...
Որ ի բարձուն բնակեալդ ես
Եւ հային յարարած քո բաղրութեամբ»^{10:}

Ուշադրության արժանի է սյս Հարցի Գործատունը, որը աշքի է ընկնում իր ճարտասանական ոճով: Խաչված և նարություն առած Փրկիչը.

«Որ հրեշտակացն անտեսանելին է,
Ի վերայ խաչին տեսա.
Որ սրովքէիցն անհիսանելին է,
Ի գերեզմանի եղա.
Որ քրովքէիցն անհմանալին է,
Ի յերրորդ առոր յարեաւ»^{11:}

Հետևյալ Հարցը («Որ յառաջ») երգում է այն մասին, որ Քրիստոսը որպես «իմանալի Բան» արևից էլ առաջ է գոյություն ունեցել, որին «մարդարէն վերակոչեաց հոգի յերեաց մերոց»: Ահա այդ հոգու զորությամբ էլ նա

«Զդրուն դժոխոց փշրեաց,
Եւ զարգելեալս ի նմա կորօքեաց ի
կեանս»^{12:}

Մյուս երկր. Հարցերում գերիշխող զգաց-
մունքներն են փառաբանությունը և երկյու-
ղածությունը: Մի Հարցում Փրկիչը «ան-
սկիզբ Բանէ» է, «Թագաւոր անմահ է», ո-
րի համար շարականագիրը կոչ է անում
«առաել բարձր արարէք զնա յախտեան».

¹⁰ Անդ., էջ 493:

¹¹ Անդ., էջ 494:

¹² Անդ., էջ 496:

իսկ մյուսում, այս ձայնի վերջին հարցում, նոյն Փրկչին բանաստեղծը դիմում է այսպես.

«Որ յահեղակերպ աթոռ նստիս,
Եւ ընդ Հօր ես լէութեան...
Ուստի սերովքերն ի խոնարի ունելով,
Զդեմս յարփիահրաշ փառաց քոց»^{13:}

Այստեղ դատապարտվում է միաժամանակ Հրուդայի արարքը՝ հակադրելով Քրիստոսի փառքին, մարդասիրությանն ու ողորմա-
ծությանը.

«Իսկ Յուդայի լրբութեամբ մերձեալ,
Ի համբոյր ճշաւակ և առիթ մատնու-
թեան...»¹⁴

Սակայն հաղթանակով է ավարտվում ամեն ինչ: Երեք օրից հետո Փրկիչը հարություն է առնում, քառասուն օր դարձալ նա երկ-
րի վրա ապրում է, քարոզում և հրաշքներ
օգործում, ապա համբառնում երկինքի: Վերջին Հարցի Գործատունը վերջանում է այդպես.

«Համբարձաւ Աւառուած օրինութեամբ,
Եւ օօրք երկնից երգէին՝
—Ո՞վ է սա թագաւոր փառաց...
—Սա է նա, որ ի հովանաւոր և ի լուսեղէն
Ամպոցն ձայն եղն,
—Դա է որդի իմ սիրելի,
Բարձր արարէք զնա յախտեան...»¹⁵

Բարսեղ Ծոնով էլ վերջանում են մեզ հայտնի 7-րդ դարի շարականագիրները: Իսկ հրա- խմբագրած Ծոնընտիր շարականն էլ ստանում է կայուն, կանոնական բուլան-
դակություն:

¹³ Անդ., էջ 500:

¹⁴ Անդ., էջ 500:

¹⁵ Անդ., էջ 501:

